ՀԵՆՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Կարտոֆիլը համեմատաբար նոր մշակաբույս է Հայաստանի համար: Այն մի քանի աղբյուրների համաձայն[1,2,3] երկիր է ներմուծվել 19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբներին: Սկզբնական շրջանում կարտոֆիլը դանդաղորեն տարածվում էր Հայաստանի լեռնային տարածաշրջաններում և հատկապես այն վայրերում, որտեղ հիմնվել էին ռուս վերաբնակների բնակավայրերը: Դրանք էին Լոռվա բարձրավանդակը, Սևանա լճի արևմտյան մոտակայքը, Հրազդանի ներկայիս տարածաշրջանը և այլուր: Այնուհետև, կարտոֆիլը տարածվեց հանրապետության ամբողջ տարածքով, իսկ 1930-ական թվականներից զբաղեցրեց իր կայուն տեղը ցանքաշրջանառությունների տարածվող համակարգում: Ներկայումս հանրապետություն չկա մի մարզ, մի գյուղական համայնք, որտեղ կարտոֆիլ չմշակվի:

Կարտոֆիլը լայնորեն օգտագործվում է Հայաստանի բնակչության կողմից որպես անփոխարինելի պարենատեսակ և այստեղ նա հանդիսանում է «երկրորդ հացը »:

Կարտոֆիլի տարածման առաջին տասնամյակներում նրա բերքատվությունը բավականին ցածր էր: Մի շարք աղբյուրներից[1,3] տեղեկանում ենք, որ 1950-ական թվականներին կարտոֆիլի բերքը Հայաստանում մեկ հեկտարից կազմում էր շուրջ 60 ցենտներ, իսկ մինչև 1970-ականները այն հասավ 70-80 ցենտների: Ընդ որում, Լոռվա մարզում այդ ցուցանիշները նկատելիորեն բարձր էին և կազմում էին 90-100 ցենտներ: Այնուհետև, նոր տրտերի կիրառման ու տեխնոլոգիայի կատարելագործման շնորհիվ կարտոֆիլի բերքատվությունը 1975-1980թթ. հասավ 141.0, իսկ 1981-1985թթ. 146.0 ցենտների:

Նշենք նաև, որ 20-րդ դարի երկրորդ կեսի ընթացքում Հայաստանում հիմնական կարտոֆիլացան տարածաշրջաններ էին համարվում Լոռի-Փամբակը և Սևանի ավազանը, որոնք միջին հաշվով ապահովում էին կարտոֆիլի հանրապետական արտադրության մոտավորապես 30-ական տոկոսը, իսկ մնացած 40-ը տալիս էին հանրապետության մյուս բոլոր տարածաշրջանները միասին վերցրած:

Հայաստանում 1991-1992թթ. իրականացված բարեփոխումների ընթացքում բուսաբուծության ոլորտում տեղի ունեցան արմատական փոփոխություններ և տեղաշարժեր:

Նախ վարելահողերի ու բազմամյա տնկարկների սեփականաշնորհման ենթարկված տարածքները բաժանվեցին-տրոհվեցին տասնյակ հազարավոր կտորների և կտորիկների, որոնք բաշխվեցին գյուղացիական ընտանիքներին, պահպանելով «արդար բաշխելու» սկզբունքը, այսինքն, որպեսզի բոլորն էլ ստանան և ջրովի, և անջրդի և լավ, և միջակ, և վատ հողամասեր: Արդյունքում, ամեն մի ընտանիքի հասավ տարբեր վայրերում տեղաբաշխված մի քանի հողակտորներ, որոնց գումարային միջին տարածքը ՀՀ-ում կազմում է շուրջ մեկ հեկտար վարելահող և 0.18-0.20-ական հեկտար բազմամյա տնկարկներ ու խոտհարքեր: Այս ցուցանիշները, ըստ մարզերի, անգամ ըստ հարևան գյուղական համայնքների ունեն միանգամայն տարբեր մեծություններ և տատանվում են զգալի չափերով[4]:

Հողային ֆոնդի ծայրահեղ մանրացումը հանգեցրեց նրան, որ գյուղացիական տնտեսություններից շատերը, չունենալով նյութական ու տեխնիկական միջոցներ ստացած ամբողջ հողաբաժինը մշակելու համար, հրաժարվեցին բնակավայրերից հեռու, անջրդի, թեք լանջերին ընկած իրենց պատկանող հողակտորներից ու կենտրոնացրին ամբողջ ուշադրությունը գյուղամերձ, հարմարավետ հողակտորների վրա: Սրա հետևանքով բարեփոխումների առաջին իսկ տարիներին տեղի ունեցած ցանքատարածությունների էական չափերի հասնող կրճատումներ: Այսպես, 1990-1995թթ. ընթացքում Հայաստանում ցանքատարածությունները կրճատվեցին ավելի քան հարյուր հազար հեկտարով կամ 24%-ով, ցանքատարածությունների կրճատման գործընթացը շարունակվեց ընդհուպ մինչև 2002 թ., երբ ցանքերի ընդհանուր տարածությունը կազմեց 1990թ. ցուցանիշի 70%-ը:

2002թ. հետո նկատվեց ցանքատարածությունների զգուշավոր ավելացում, սակայն ելակետային 1990թ. ցուցանիշը դեռևս շատ հեռու է:

Հատկանշական է, որ ցանքատարածությունների կրճատումը տեղի ունեցավ տեխնիկական /ծխախոտ, շաքարի ճակնդեղ, խորդենի/ և կերային մշակաբույսերի կրճատման ինչպես նաև բազմամյա տնկարկների քանդման հաշվին:

1995թ. դրությամբ տեխնիկական մշակաբույսերի աճեցումը գործնականում դադարեցվեց, իսկ կերայիններինը կրճատվեցին շուրջ երեք անգամ, իսկ 2002թ. դրությամբ՝ ավելի քան հինգ անգամ:

---

[1] Աղամյան Լ. «Կարտոֆիլի արտադրության տնտեսական էֆեկտիվությունը ՀՍՍՀ-ում» Գյուղ. գիտությունների տեղեկատու ամ., Եր. 1962 թ, 7, էջ 18-23:
[2] Գրիգորյան Ա. «Կարտոֆիլի պատմությունը Հայաստանում», «Ագրոլրատու» թ., Եր 1997 թ. 4.:
[3] Գրիգորյան Կ. և ուր. «Կարտոֆիլի արտադրության էկոնոմիկայի և մարկեթինգի հիմնահարցերը» գրքույկ Եր. 1999 ՀԳԱ էջ 61:
[4] «ՀՀ Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին» 2003-2006 թթ. Եր. ՀՎԾ 2004-2007 թթ.:

Ցանքատարածությունների շարժընթացի դիտարկումը ցույց է տալիս, որ դրանց ընդհանուր կրճատման ֆոնի վրա արագ տեմպերով տեղի է ունեցել հացահատիկային ու բանջարային մշակաբույսերի և կարտոֆիլի ցանքերի ընդգծված ընդլայնում: Այսպես, 1990թ. հետ համեմատած 2004-2006թթ. հացահատիկի ցանքատարածությունները 138.2 հազ. հեկտարից հասան 200.0 հազարի, կարտոֆիլինը՝ 22.4-ից 35.7, իսկ բանջարայիններինը 18.0-ից 23.0 հազարի կամ ավելացան, համապատասխանաբար, 45, 59 և 28%-ով:

Ցանքատարածությունների ընդլայնմանը զուգընթաց, վերջին երեք տարիների ընթացքում նկատելիորեն բարձրացան կարտոֆիլի և բանջարայինների բերքատվությունը: Այսպես, 1990թ. 94.8 ցենտ հեկտարի դիմաց 2004-2006թթ. միջին տվյալներով կարտոֆիլի բերքատվությունը հեկտարից կազմեց 163.1, իսկ բանջարայիններինը համապատասխանաբար 216.4 և 288.4 ցենտ./հեկտ.:

Ցանքատարածությունների ու բերքատվության բերված առաջընթացի հետևանքով զգալիորեն ավելացավ հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի արտադրությունը:

Հացահատիկի կարտոֆիլի և բանջարեղենի արտադրության շարժընթացի համեմատական ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի արտադրության շարժընթացը ՀՀ-ում[1]

Արտադրատեսակներ	1990 թ.			2004-2006թթ. միջև			աճը %-ով
	ցանք /հազ. հեկտ./	բերքը հեկտարից /ցենտ/	համախառն բերքը /հազ. տոննա/	ցանք /հազ. հեկտ./	բերքը հեկտարից /ցենտ/	համախառն բերքը /հազ. տոննա/	
Հացահատիկ	138.2	19.6	270.9	189.7	18.5	350.9	129.5
Կարտոֆիլ	22.4	94.8	212.6	34.4	163.1	561.1	263.9
Բանջարեղեն	18.0	216.4	389.5	23.0	288.4	663.3	170.3

Աղյուսակի տվյալներից դժվար չէ նկատել, որ բուսաբուծական հիմնական պարենատեսակների արտադրությունը զգալիորեն ավելացել է: Հացահատիկինը՝ 29.5 կարտոֆիլինը 2.64 անգամ և բանջարեղենինը՝ 70.3 %-ով: Ընդորում, եթե հացահատիկի արտադրությունը տեղի է ունեցել բացառապես ցանքատարածությունների ընդլայնման, այսպես կարտոֆիլի և բանջարեղենի արտադրության աճը և՛ տարածությունների ընդլայնման, և՛ բերքատվության բարձրացման հաշվին:

Ամփոփելով 1991-1992թ. հետո բուսաբուծական ճյուղերի զարգացման շարժընթացի քննարկումը, կարելի է գալ հետևյալ եզրակացության. հաշվի առնելով երկրի սոցիալական ու տնտեսական անկայուն իրավիճակը, գյուղական բնակչությունը ձգտել է ապահովել ընտանիքը առաջին անհրաժեշտության պարենատեսակներով՝ հացահատիկով, կարտոֆիլով ու բանջարեղենի անհրաժեշտ տեսականիով: Այս նպատակով, կենտրոնացնելով արտադրությունը բարենպաստ հողամասերում և հրաժարվելով անարդյունավետ հողակտորներից, դադարեցրել է տեխնիկական և կերային մշակաբույսերի մշակությունը և գրեթե ամբողջ արտադրությունը նպատակամղել է առաջին անհրաժեշտության պարենամթերքի արտադրությանը:

Նկարագրված իրավիճակում, այնուհանդերձ, ուշադրություն է հրավիրում կարտոֆիլի արտադրության ավելացման չափերը վերջին տարիներին մինչև 560 հազար տոննա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ նույն տարիներին սննդի համար օգտագործվել է մոտավորապես 180 հազ. տոննա, կամ արտադրանքի 31 %-ը, դժվար չէ եզրակացնել, որ հանրապետությունում գյուղական բնակչության պահանջմունքները բավարարելուց հետո, առաջանում են կարտոֆիլի ապրանքային լուրջ ռեսուրսներ:

Փորձենք հնարավորին ստույգ հաշվարկել ապրանքային կարտոֆիլի միջին տարեկան ծավալը 560 հազ. տոննա համախառն արտադրության պարագայում:

Գյուղական բնակչությունը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1160 հազ. մարդ: Եթե ընդունենք, որ գյուղաբնակ յուրաքանչյուր մարդ սննդի համար տարեկան օգտագործում է 70 կգ կարտոֆիլ /հանրապետության միջինը 60 կգ/, ապա գյուղական բնակչության պահանջարկը կկազմի 81 հազ. տոննա: Որպես սերմնանյութ օգտագործվում է շուրջ 130 հազ. տոննա: Որպես անասնակեր՝ ևս 60 հազ. տոննա, իսկ բնական կորուստները կկազմեն շուրջ 40 հազ. տոննա:

Այսպիսով, եթե 560 հազար տոննա համախառն բերքից հանենք կարտոֆիլի օգտագործման վերը նշված ծավալները, ապա ապրանքային կարտոֆիլի տարեկան մոտավոր ծավալը կկազմի 250 հազար տոննա: Այս քանակությունը 2.5 անգամ ավելի է, քան օգտագործվում է սննդի համար՝ քաղաքային բնակչության կողմից: Հետևապես, հանրապետությունում կա շուրջ 150 հազար տոննա ռեսուրս, որը կարող է արտահանվել հանրապետությունից կամ հանձնվել արդյունաբերական վերամշակման՝ չիպսերի, օսլայի, սպիրտի կամ այլ արտադրության համար: Ցավոք, հանրապետությունում չկա կարտոֆիլ վերամշակող որևէ ձեռնարկություն, չի կարգավորված նաև դրա կազմակերպված արտահանումը թեկուզ Վրաստան, որտեղ կա կարտոֆիլի մեծ պահանջարկ: Եվ սա այն դեպքում, երբ դրա համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը ակնբախ է:

Նշենք նաև, որ նշվածը ապրանքային կարտոֆիլի սահմանային ծավալ չէ: Պահանջարկի առատության դեպքում հանրապետության մի քանի մարզերում, մասնավորապես Լոռվա մարզում, կան կարտոֆիլի արտադրության ավելացման իրատես հնարավորություններ:

Ի դեպ Լոռվա մարզում կարտոֆիլի արտադրության ավելացման ռեզերվների մասին: Ինչպես նշվել է վերևում, 1990թ. հետո հանրապետությունում կտրուկ ավելացավ նաև կարտոֆիլի արտադրությունը: Այս գործըն-

[1] «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը» 2003-2006 թթ. Եր. ՀՎԾ 2004-2007 թթ.

թացում Լոռվա մարզը կազմեց բացառություն: Անցած տարիների ընթացքում այստեղ չավելացան ոչ կարտոֆիլի ցանքատարածությունները, ոչ բերքատվությունը և բնականաբար, ոչ էլ նրա արտադրության ծավալները:

Նշված առումով հետաքրքիր է ՀՀ երկու հիմնական կարտոֆիլացան Լոռվա և Գեղարքունիքի մարզերի կարտոֆիլի արտադրության համեմատական ցուցանիշները, որոնք բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակի տվյալներից ակնբախ է, որ Լոռվա մարզում ոչ միայն չի եղել կարտոֆիլի արտադրության աճ, այլ ընդհակառակը, ցանքատարածությունների կայունության պարագայում իջել է բերքատվությունը և, հետևապես, նաև արտադրության ծավալները:

Գեղարքունիքի մարզում նկատվել է ճիշտ հակառակ գործընթացները: Այստեղ ցանքատարածությունները աճել են ավելի քան երկու անգամ, որը ուղեկցվել է բերքատվության աճի հետ: Արդյունքում 1990-2006թթ. ընթացքում Լոռիում կարտոֆիլի արտադրությունը պակասել է 14 %-ով, իսկ Գեղարքունիքում աճել է շուրջ 4 անգամ:

Կարտոֆիլի արտադրության բերված զարգացումները հանգեցրին նրան, որ արտադրության երբեմնի հավասար ցուցանիշներ ունեցող մարզերը ներկայում գտնվում են միանգամայն տարբեր հարթությունների վրա:

Աղյուսակ 2

Կարտոֆիլի արտադրության շարժընթացը Լոռվա և Գեղարքունիքի մարզերում[1,2]

Մարզեր	Ցուցանիշներ	Չափի միավորը	1990 թ.	2004-2006 թթ. միջինը	2004-2006 թթ %-ով 1990թ. նկատմամբ
Լոռի	Ցանք	հազ. հեկտ.	6.3	6.3	100.0
	Բերքատվ.	ցենտ/հեկտ.	101.2	86.7	85.7
	Համախ. բերք	հազ. տոննն.	63.8	54.6	85.7
	Տես. կշիռը ՀՀ-ում	%	29.5	9.7	32.9
Գեղարքունիք	Ցանք	հազ. հեկտ.	7.2	15.1	209.7
	Բերքատվ.	ցենտ/հեկտ.	89.2	168.8	189.2
	Համախ. բերք	հազ. տոննն.	64.2	254.9	397.0
	Տես. կշիռը ՀՀ-ում	%	29.7	45.5	153.2

Գեղարքունիքի մարզը, անշեղորեն ընթանալով վերելքի ուղիով, ներկայումս, ապահովելով հանրապետական արտադրության 45 %-ը, կայունորեն հանդիսանում է հանրապետության առաջատարը: Միանգամայն այլ է իրավիճակը Լոռվա մարզում: Դոփելով տեղում, նա կորցրել է իր առաջատարի դիրքերը և տալիս է կարտոֆիլի հանրապետական արտադրության 10 %-ից էլ պակաս ծավալ:

Լոռվա մարզում կարտոֆիլագործության բերված իրավիճակի պատճառների ուսումնասիրությունը հանգեցնում է նրան, որ այստեղ չկան տեխնոլոգիական ու կազմակերպական խնդիրներ, չի փոխվել նաև գյուղական բնակչության վերաբերմունքը կարտոֆիլի մշակության վերաբերյալ: Գլխավոր խնդիրը այստեղ կարտոֆիլի իրացումն է:

Դիտարկելով Լոռվա մարզում արտադրված կարտոֆիլի իրացման, արտահանման հիմնախնդիրները, հարկ է նշել հետևյալը: Ստեփանավանի /հասկանանք Լոռու/ կարտոֆիլը, ինչպես նաև Տաշիրի/նախկին Վորոնցովկա, նույնպես հասկանանք Լոռու/ կարագն ու պանիրը ավանդաբար մեծ պահանջարկ էին վայելում հարևան Վրաստանի, մասնավորապես Թբիլիսի քաղաքի շուկաներում և գներն էլ այստեղ բարձր էին, քան Հայաստանում: Տարիների ընթացքում կապը Վրաստանի շուկաների հետ մարզի գյուղական բնակչության համար դարձավ ավանդական և առավել հրապուրիչ:

ԽՍՀՄ փլուզումից և նախկին միութենական հանրապետությունների անկախության ձեռք բերելուց հետո, Լոռու մարզի բնակչության համար Վրաստանի շուկաները գործնականում փակվեցին: Միաժամանակ, վառելանյութի ու տրանսպորտային միջոցների աննախադեպ թանկացումը ՀՀ-ում և, իհարկե ավանդույթների անբավարարությունը, հանգեցրին նրան, որ Երևանի շուկան դարձավ անշահավետ և, գրեթե անհասանելի:

Կարտոֆիլի իրացման վերը նկարագրված իրավիճակը մենք համարում ենք Լոռու մարզում կարտոֆիլագործության տեղապտույտի գլխավոր պատճառներից մեկը, գուցե ամենագլխավորը:

Հայաստանից գյուղատնտեսական մթերքների, մասնավորապես կարտոֆիլի, արտահանման օրենսդրորեն սահմանված արգելքներ չկան: Սակայն առանձին գյուղացիական տնտեսության համար, որը ի վիճակի է արտահանելու համար առանձնացնել մի քանի տոննա կարտոֆիլ, շատ դժվար է լուծել տեղափոխման խնդիրը, կատարել երկու երկրների մաքսային, կարանտինային և այլ ծառայությունների պահանջները, հաղթահարել լեզվային խոչընդոտները և իր մի քանի տոննա կարտոֆիլը հասցնել Թբիլիսիի շուկա:

Շարադրվածի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը: Չնայած նրան, որ ԱՎԾ հաշվետվություններում նշված է, որ կարտոֆիլը Հայաստանից չի արտահանվում, տեղերում կատարված մեր հարցումները և ուսումնասիրությունները հանգեցնում են հակառակ եզրակացության: Կարտոֆիլի արտահանում Լոռու մարզից Վրաստան իրականում տեղի է ունենում: Սակայն դա կատարվում է առանձին գործունյա մարդկանց ջանքերով, որպես կանոն վրացական կողմից և դա չի արձանագրվում մաքսային ու, հատկապես նաև, վիճակագրական հաշվետվություններում: Այլ կերպ ասած, գործարքները կատարվում են «ստվերային» պայմաններում:

Այնուհանդերձ, կարտոֆիլ Լոռու մարզում մշակվում է և դաշտավարության ոլորտում այն հանդիսանում է առաջատար մշակաբույսը: 2005-2006թթ. տվյալներով, դաշտավարության համախառն արտադրանքի կազմում կարտոֆիլի բաժինը կազմում էր 47.6 բանջարեղենինը 34.9, հացահատիկը 12.5 և կերային մշակա-

---

[1] «Գյուղատնտեսությունը Հայաստանում 1990-1999 թթ» ՀՀ ԱՎԾ Եր. 2000 թ.:

[2] «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը» 2003-2006 թթ. Եր. ՀՎԾ 2004-2007 թթ.

բույսերը՝ 4.8 %: Հետևապես, մարզի դաշտավարության մասնագիտացումը կարելի է բնութագրել որպես կարտոֆիլաբանջարաբուծական, քանի որ այդ երկու ճյուղերը տալիս են ամբողջ արտադրանքի 82.5 %-ը:

Անդրադառնալով կարտոֆիլի արտադրության տնտեսական արդյունավետության խնդիրներին, կուզենանք նշել հետևյալը: Գյուղացիական տնտեսություններում արտադրության վրա կատարվող աշխատանքային, նյութադրամական և այլ ծախսումների, հավասարապես նաև արտադրանքի օգտագործման, ստացած եկամուտների ու դրանց բաշխման վերաբերյալ որևէ համակարգված հաշվառում չի տարվում, իսկ գործարքներն էլ վարվում են միայն կանխիկ վճարումների ձևով:

Հետևապես, ստույգ տեղեկատվության բացակայության պայմաններում հնարավոր չէ հաշվարկել արտադրանքի ստույգ ինքնարժեքն ու նրա իրացումից ստացվող արդյունավետությունը:

Միակ կանոնակարգված տեղեկատվությունը ստացվում՝ ԱՎԾ կողմից ընտրանքային գյուղացիական տնտեսություններում տարվող հետազոտական աշխատանքներից: Ահա այս նյութերից էլ մենք օգտվել ենք ստորև բերված հաշվարկները կատարելիս:

2005-2006թթ. Լոռու մարզում հետազոտության և ուղղակի հաշվառում կատարելու համար ընտրված են եղել 874 գյուղացիական տնտեսություն: Ստորև բերվող ցուցանիշները մեր կողմից միջինացված երկու տարվա նյութերն են: Եվ այսպես, այդ 874 տնտեսություններում մշակվել է 119 հեկտար կարտոֆիլ կամ մեկ տնտեսության հաշվով 0.14, իսկ միջին բերքը հեկտարից կազմել է ընդամենը 87 ցենտ:

Հետազոտության նյութերից տեղեկանում ենք, որ կարտոֆիլի մշակության աշխատանքները հիմնականում կատարվում են ընտանիքի անդամների կողմից, իսկ վարձու աշխատանքը կազմում է ձեռքի ամբողջ աշխատանքների 0.5 %-ի սահմաններում:

Աշխատանքային բոլոր ծախսումները մեկ հեկտարի հաշվով կազմել են 153 մարդ /օր: Սա բավականին մեծ թիվ է և այն ցույց է տալիս, որ մեքենայացված աշխատանքների ծավալը չնչին է: Պայմանականորեն ընդունելով ընտանիքի անդամների մեկ մարդ / օրվա վարձատրությունը 1600 դրամ / մեկ մարդ ժամը-200 դրամ հաշվարկով / մեկ հեկտարի հաշվով կստացվի ընդամենը 244.8 հազար դրամ: Տեղադրելով այս ցուցանիշները ընդհանուր հաշվարկում կարելի է դուրս բերել ամբողջ ծախսերը և, հետևապես ինքնարժեքը:

Աղյուսակ 3

Կարտոֆիլի արտադրության ծախսերը և ինքնարժեքի հաշվարկը 874 ընտրանքային տնտեսությունների նյութերով*

	Արտադրություն /տոննա/	Աշխատանքի վարձատրություն	Տնկանյութ	Վարձու տեխնիկա, տրանսպորտ, վառելիք	Տեխնոլոգիական և այլ**	Հարկեր	Ընդամենը	
							Մլն դրամ	Մեկ ցենտ հաշվով /հազ. դրամ/
Ծախսումները /մլն դրամ/	1034	29.3	28.2	10.4	4.6	1.2	73.7	7.1
Կառուցվածքը / % /	×	39.8	38.3	14.1	6.2	1.6	100	×

* Ընդամենը 119 հեկտար և 87 ցենտ./ հեկտար բերքատվության պարագայում

** Պարարտանյութ, թունաքիմիկատներ, ջրի վարձ և այլ ծախսեր

Բերված տվյալներից ուշադրություն է հրավիրում այն հանգամանքը, որ կարտոֆիլի արտադրությունը մարզում խիստ ապակենտրոնացած է՝ 0.14 հա մեկ տնտեսության հաշվով, իսկ դիտարկվող տարիներին բերքատվությունը բավականին ցածր էր՝ 87 ցենտ/հեկտ.: Բնական է, որ այսպիսի պայմաններում ակնկալել արտադրության արդյունավետության քիչ շատ բավարար մակարդակ կլինի ծայրահեղ միամտություն: Եվ պատահական չէ, որ ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-տվյալները, ինքնարժեքի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ՝ գրեթե 40 % ունեն աշխատանքային ծախսումները: Հասկանալի է, որ մեքենայով կատարվող ցանկացած արտադրական գործընթացները այդպիսի փոքր տնտեսությունների վրա կլինեն անշահավետ և անիմաստ:

Ինքնարժեքի կառուցվածքում, քիչ չափով զիջելով աշխատանքային ծախսումներին, երկրորդ տեղը զբաղեցնում են տնկանյութի վրա կատարվող ծախսումները՝ 38.3 %: Հաջորդ տեղերը զբաղեցնում են վարձու տեխնիկան և տրանսպորտային միջոցները, տեխնոլոգիական և այլ ծախսերը և վերջապես հարկերը:

Ի դեպ, արժե նշել, որ հարկերը /հողի հարկը, անշարժ գույքի հարկը/ ընդհանուր ծախսումների կազմում զբաղեցնում են ընդհամենը 1.6 % և խոսակցությունները այն մասին, որ պետք է «թեթևացնել» գյուղացիության հարկերը չունեն որևէ լուրջ հիմնավորում: Տվյալ դեպքում համախառն արտադրանքի կազմում հարկերը կազմում են մեկ տոկոս կամ դրանից էլ պակաս տեսակարար կշիռ:

Ավարտելով աղյուսակ 3-ի մեկնաբանությունը, ընդգծված ձևով նշենք, որ տվյալ դեպքում կարտոֆիլի մեկ ցենտների ինքնարժեքը Լոռու մարզում, դատելով 874 ընտրանքային տնտեսությունների ամփոփ նյութերով, կազմել է 7.1 հազ. դրամ:

ԱՎԾ տվյալներով[1], 2005-2006 թթ ընթացքում գյուղացիական տնտեսությունների կողմից կարտոֆիլը իրացվել է, միջին հաշվով, մեկ ցենտները 10.0 հազ. դրամով: Նշենք, որ նախորդ 2-3 տարիների համեմատ կարտոֆիլի գինը 2006թ. կտրուկ բարձրացավ՝ 40-50 %-ի սահմաններում: Այս հանգամանքն էլ ապահովեց

[1] «Պարենային ապահովվածություն և աղքատություն» 2003-2006 թթ. Եր. ՀՎԾ 2004-2007 թթ., էջ 35:

կարտոֆիլի բավարար շահութաբերությունը Լոռու մարզում: Այսպես, մեկ ցենտներից շահույթը կազմեց / 10.0-7.1 / 2.9 հազ. դրամ, ինչը ապահովեց շուրջ 40 % շահութաբերություն:

Բերված հաշվարկները ցույց են տալիս, որ կարտոֆիլը Հայաստանում ընդհանրապես, Լոռու մարզում մասնավորապես, իրոք հանդիսանում է շահութաբեր մշակաբույս: Եթե այն շահութաբեր է արտադրության այդպիսի ապակենտրոնացվածության ու ցածր բերքատվության պայմաններում, ապա կարելի է վստահորեն կանխատեսել, որ արտադրության նորմալ համակենտրոնացման ու բավարար բերքատվության պարագայում կարտոֆիլը արտադրության տնտեսական արդյունավետության առումով կլինի անհասանելի մյուս ճյուղերի համար:

Այստեղից բխում է այն եզրակացությունը, որ կարտոֆիլաբուծության զարգացումը Հայաստանում արժանի է առանձնահատուկ ուշադրության: Անհրաժեշտ է մշակել կարտոֆիլաբուծության զարգացման ազգային ծրագիր, նախատեսելով խոշոր ապրանքային, տեխնոլոգիական բարձր մակարդակով վարվող արտադրություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանում Հայաստանը միակ երկիրն է, որ ունի և կարող է ավելացնել կարտոֆիլի արտահանման ռեսուրսներ, ծրագրում պետք է նախատեսել այդ գործի կազմակերպման մեխանիզմները:

Այնուհետև, Հայաստանը ամեն տարի ներմուծում է մինչև 180-190 տոննա կարտոֆիլ օսլա, մեծ քանակությամբ չափսեր:

Ըստ երևույթին անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանում կարտոֆիլի արդյունաբերական վերամշակման խնդիրը և դրական արդյունքի դեպքում ձեռնարկել այդ գործը:

Հայաստանում կարտոֆիլագործությունը գյուղատնտեսության առավել հեռանկարային ճյուղերից մեկն է և այն արժանի է պետական հատուկ ուշադրության:

ՄՀԵՐ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ՀՀ ջրային տնտեսության պետական
կոմիտեի աշխատակազմի վարչության պետ
ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ԱԴԱՆԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ջուրը մարդու կյանքի կարևորագույն պահանջմունքներից է և տնտեսական հասկացության արդյունք: Բոլոր երկրներում կառավարությունները պատասխանատվություն են կրում հասարակության բոլոր անդամներին անվտանգ ջրի հասանելիության համար: Նկատի ունենալով բնակչության ցածր վճարունակությունը և ջրային տնտեսության զարգացման հրամայականը՝ անհրաժեշտություն է առաջանում պետական բյուջեից հատկացնել լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ բնակչության խոցելի խմբերին աջակցության և սոցիալական քաղաքականության ապահովման, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպություններին աջակցելու նպատակով:

1. Սոցիալական օգնության ծրագրերի մշակման ժամանակ պետությունը պետք է բնակչությանը խմելու ջրի օգտագործման որոշակի աջակցության նպատակով պահպանի ջրօգտագործողների հարաբերություններում սոցիալական աջակցությունը, պետք է ապահովի անհրաժեշտ ֆիզիոլոգիական և հիգիենիկ պահանջներին համապատասխան ջրի հավասար մատչելիություն:
2. Սոցիալական աջակցության համակարգը պետք է լինի հասցեական, այսինքն՝ սոցիալական աջակցություն պետք է տրվի այն բնակիչներին, ովքեր դրա կարիքն ունեն:
3. Սոցիալական աջակցության համակարգը պետք է լինի արդյունավետ, այսինքն երաշխավորի սպառման բավարար նվազագույն մակարդակ անվճարունակ ընտանիքներին:
4. Սոցիալական աջակցության համակարգը պետք է լինի իրատեսական, այսինքն ֆինանսապես հիմնավորված՝ ելնելով բյուջեի իրական հնարավորություններից:
5. Սոցիալական աջակցության համակարգը վարչական կառավարման տեսանկյունից պետք է լինի պարզ և ոչ թանկ, ինչպես նաև վերահսկողության համար թափանցիկ և հասանելի: Բնակչության համար սոցիալական պաշտպանության բոլոր միջոցառումների անցկացման պատասխանատվությունը պետք է ընկնի պետության վրա:
6. Սոցիալական աջակցությունը պետք է նպաստավոր նախապայմաններ ստեղծի ջրի տնտեսվար օգտագործման համար:
7. Սոցիալական աջակցությունը պետք է նպաստի հասարակությունում սոցիալական լարվածության նվազեցմանը՝ հանգեցնելով շուկայական տնտեսությանը խոչընդոտող արդյունքներին:

Սկզբունքները.

Սոցիալական աջակցության միջոցառումները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝

ա) միջոցառումներ, որոնք ուղղված են քիչ վճարունակ տնային տնտեսությունների համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարների նվազեցմանը,